**2015-16 ուստարի**

Համաձայն ՀՀ կառավարության որոշման 2015 թվականի մայիսից ԴՏՀՏՇՀ-ն սկսել է «Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագրի փորձնական փուլի» իրականացումը Վայոց Ձորի մարզում: Որոշման պահանջներից ելնելով կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կրթության ազգային ինստիտուտի կողմից վերանայվել և ՀՀ ԿԳՆ նախարարի հրամանով հաստատվել են տարրական դասարանների առարկայական չափորոշիչները և ծրագրերը՝ ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կիրառման տեսանկյունից,
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից գնահատվել են Վայոց Ձորի մարզի ՏՀՏ ենթակառուցվածքների հնարավորությունները և տարրական դասարանների ուսուցիչների ՏՀՏ գիտելիքներն ու վերապատրաստման կարիքները,
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից Վայոց Ձորի մարզում կատարվել է «Հայաստանի կրթական ցանցի» տեխնիկական վերազինում՝ ապահովելով մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում առնվազն 5 մբ/վրկ ինտերնետ թողունակություն: Բացի այդ, մարզի հանրակրթական դպրոցներում ստեղծվել է Վայ-Ֆայ անլար կապի ցանց,
- Վայոց Ձորի մարզի 42 դպրոցների առաջին դասարանի աշակերտներին և դասվարներին տրվել է թվով 670 ԱրմԹաբ պլանշետ,
- Առաջին դասարանի աշակերտների ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ԱրմԹաբ պլանշետներում տեղադրվել են թվով 20 էլեկտրոնային ռեսուրսների հղումներ,
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից մշակվել է դասվարների վերապատրաստման ծրագիր՝ ՏՀՏ գիտելիքների բարելավման և ԱրմԹաբ պլանշետների աշխատանքին ծանոթանալու ուղղությամբ, և իրականացվել է մարզի դպրոցների առաջին դասարանների դասվարների վերապատրաստում,
- ԴՏՀՏՇՀ-ի կողմից՝ ՏՀՏ գիտելիքների բարելավման, ԱրմԹաբ պլանշետների աշխատանքին ծանոթանալու և էլեկտրոնային ռեսուրսներով աշխատելու հմտությունները զարգացնելու նպատակով, վերապատրաստվել են Վայոց Ձորի մարզից վեց ուսուցիչներ, որոնք էլ իրականացրել են 48 առաջին դասարանի դասավարների երկօրյա վերապատրաստումներ:
- ԴՏՀՏՇՀ-ի կողմից մշակվել է փորձնական փուլի կառավարման մոդել և մշտադիտարկման ընթացակարգ,
- ԴՏՀՏՇՀ-նի կողմից մշակվել և ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատվել է «ՀՀ Վայոց Ձորի մարզի առաջին դասարանի սովորողներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագրի փորձնական փուլի

շրջանակներում «ԱրմԹաբ» պլանշետների գնման, բաշխման և շահագործման ընթացակարգը»: Նշված ընթացակարգը նախապես քննարկվել է մարզի դպրոցների տնօրենների հետ,

- ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվել է ծրագրի կառավարման աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը՝ դիտարկելով ծրագրի իրականացման ընթացքը, կայացրել է որոշումներ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագրի իրականացման ուղղությամբ,
- «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագրի առաջին տարվա կատարված աշխատանքների ուղղությամբ իրականացվել է մոնիտորիգ և ամփոփվել են արդյունքները: Մոնիտորինգի արդյունքում մշակվել է 2016-17 ուստարվա ընթացքում ծրագրի իրականացման գործողությունների պլանը և ժամանակացույցը:

<u>2016-17 ուստարի</u>

- 2016-17 ուստարվա համար Վայոց Ձորի մարզի թվով 39 դպրոցների առաջին դասարանի աշակերտների և դասվարների թվին համապատասխան բաշխվել են 689 հատ ԱրմԹաբ պլանշետներ,
- Առաջին և երկրորդ դասարանի աշակերտների ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջին դասարանի աշակերտներին տրված ԱրմԹաբ պլանշետների վրա տեղադրվել են թվով 8, իսկ երկրորդ դասարանին 27 էլեկտրոնային ռեսուրսների հղումներ,
- Վայոց Ձորի մարզի 9 դպրոցներում Վայ-Ֆայ անլար կապի աշխատանքը կարգավորելու նպատակով տեղադրվել են նոր սարքավորումներ,
- ՏՀՏ գիտելիքների բարելավման, ԱրմԹաբ պլանշետների աշխատանքին ծանոթանալու և էլեկտրոնային ռեսուրսներով աշխատելու հմտությունները զարգացնելու նպատակով իրականացվել է Վայոց Ձորի մարզի երկրորդ դասարանի թվով 48 դասվարների մեկօրյա և առաջին դասարանի թվով 45 դասվարների երկօրյա վերապատրաստումներ,
- ԴՏՀՏՇՀ-ի մասնագետների կողմից պլանշետների և էլեկտրոնային պաշարների օգտագործման ուղղությամբ մարզի դասվարներին ցուցաբերվել է ամենօրյա օժանդակություն,
- սովորողների և դասվարների հաշվարկով՝ վեց ամսվա օգտագործման իրավունքով, տեղական կազմակերպություններից գնվել են երեք տեսակի էլեկտրոնային պաշարներից օգտվելու արտոնագրեր և տրվել մարզի դպրոցներին:
- Մարտ-ապրիլ ամիսներին անցկացվել է ուսումնասիրություն գրասալիկների և Վայ-ֆայ սարքերի աշխատանքի և դրանց համատեղ հասանելիության վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած թերությունների վերացման ուղղությամբ կատարվում են աշխատանքներ,
- Դասվարների մասնագիտական որակի բարձրացման և էլեկտրոնային պաշարներից օգտվելու հմտությունների զարգացման ուղղությամբ յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ թվով 96 դասվարների հետ,

անցկացվել են երկօրյա վերապատրաստումներ, յուրաքանչյուր վերապատրաստումից հետո գնահատվել է վերապատրաստման արդյունքները և պլանավորվել է հաջորդ վերապատրաստման աշխատանքները,

- ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատություններից հավաքվել է ինտերնետ կապի և դասվարների կողմից օգտագործված էլ. պաշարների մասին տեղեկատվություն: Տեղեկատվությունը վերլուծվել է և դրան համապատասխան կազմակերպվել աշխատանքները,

<u>2017-2018 ուսումնական տարի</u>

- ստեղծվել է աշխատանքային խումբ, որը կազմել է դասապրոցեսում էլ. պաշարներից օգտվելու ուսուցչի ձեռնարկ: Ձեռնարկը կազմվել է դասվարների հետ գրված նյութերը փորձարկելու միջոցով; Ձեռնարկը ամբողջությամբ պատրաստ է: Այն սեպտեմբերի վերջ կտրամադրվի դասվարներին,
- 2017-2018 ուսումնական տարվա համար մատակարավելու է թվով 712 ԱրմԹաբ պլանշետ (Windows օպերացիոն համակարգով աշխատող),
- 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակում, ՀՀ կառավարությանը ներկայացնելու նպատակով անցկացվելու է մոնիտորիգ և կատարվելու է արդյունքների նախնական գնահատում,
- սովորողների և դասվարների հաշվարկով՝ մեկ տարվա օգտագործման իրավունքով, տեղական կազմակերպություններից գնվել են 9 տեսակի էլեկտրոնային պաշարներից օգտվելու արտոնագրեր, որը պլանշետների հետ կտրվի դպրոցներին: